**Վերլուծություն**

**Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության 2017 թվականի**

**գործունեության վերաբերյալ**

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության և նրա ենթակայության ընկերությունների գործունեության հիմքում դրված են ՀՀ սահմանադրության և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջները: Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում իրականացված նպատակային ծրագրերը ուղղված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ամրագրված Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության լիազորությունների իրականացմանը:

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը 2017 թվականին շարունակել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը նպատակաուղղված գործունեությունը: Ոլորտում իրականացված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալած գործունեության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները.

- ապահովել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անաչառ, հավաստի, օպերատիվ, համակողմանի, ամբողջական և սպառիչ լուսաբանումը,
- բավարարել հանրության սեռային, տարիքային, սոցիալական, էթնիկական բոլոր խմբերի բարոյական և գեղագիտական պահանջմունքները՝ առաջնորդվելով համամարդկային և ազգային բարձր արժեքների պահպանման և հանրահռչակման սկզբունքով,
- նպաստել հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության, գթասրտության և հանդուրժողականության գաղափարների տարածմանը,
- խթանել հայ ժողովրդի պատմական հիշողության, լեզվի, գրականության, ազգային ինքնության, մշակութային ժառանգության պահպանմանն ու հարատևմանը միտված հանրային ձեռնարկումները՝ ապահովելով դրանց լուսաբանման շարունակական և հարաճուն ընթացքը,
- աջակցել մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը միտված հանրային ձեռնարկումներին՝ երեխաների մեջ ձևավորելով օրինակելի, բարոյական և գեղագիտական արժեքների ընկալման մշակույթ:

Նշված նպատակների ապահովման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2017 թվականին իր գործունեության հիմքում դրել էր հետևյալ հիմնական խնդիրները.

- շարունակել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության տեխնիկական վերազինման և շենք-շինությունների հիմնանորոգման փուլային աշխատանքները,
- թվային տեխնոլոգիաներին անցման միջոցով բարձրացնել հաղորդումների հեռարձակման որակը և ապահովել համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- պատրաստել հանրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի հրատապ խնդիրներին նվիրված այնպիսի հաղորդումներ, որոնք ապահովում են անմիջական կապը լսարանի հետ, արձագանքում են ոչ միայն հանրության կյանքում առկա հայտնի խնդիրներին, այլև հանպատրաստից բարձրացնում են նոր հարցեր և փնտրում ոչ ստանդարտ լուծումներ,
- ավելացնել այն հաղորդումների քանակը, որոնք վերաբերում են հասարակության խոցելի և անպաշտպան խմբերի՝ ծերերի, ծնողազուրկ երեխաների, հսկողությունից դուրս մնացած դեռահասների,

գործազուրկների և հաշմանդամների խնդիրներին, ինչպես նաև հանրության մեջ նրանց նկատմամբ ձևավորել համարժեք և հանդուրժողական վերաբերմունք,

- բոլոր հաղորդումներում սահմանել կենդանի, բայց կանոնական հայերենի գերակայությունը՝ որպես եթերի լեզվական քաղաքականության առանցքային պայման: Իրականացնել ազգային երգի և երաժշտության հանրահռչակումը՝ շարունակելով համապատասխան հաղորդաշարերի և համերգների հեռարձակումն ու պատրաստելով նորերը, ներկայացնել հայ ժողովրդի պատմության ուսանելի և հաղթական դրվագները, բացահայտել պատմության առեղծվածները,
- շարունակել հեռարձակել ՀՀ Ազգային ժողովի, կառավարության, պաշտպանության նախարարության, ոստիկանության գերատեսչական հաղորդումները, զանազան հաղորդումներում պատշաճ առիթներով մեծարել զոհված և ողջ մնացած հերոսներին,
- ցուցադրել բարություն և ընկերասիրություն սերմանող մուլտֆիլմեր, երեխաների մեջ արմատավորել սեփական իրավունքների պաշտպանության և հանրային պատասխանատվության զգացում, ճանաչելի և սիրելի դարձնել հայրենի բնաշխարհն ու նրա մարդկանց,
- մշտապես ուշադրության կենտրոնում պահել հանրության համար կարևոր որոշումների քննարկման և ընդունման ընթացքը,
- Երևանի պետական համալսարանի հետ համատեղ մշակված կրթական ծրագրի շրջանակներում գործող «Մասս մեդիա» կրթական կենտրոնում շարունակել նեղ մասնագիտացված հեռուստատեսային արհեստավարժ կադրերի պատրաստումը,
- մշակել և կիրառել հանրային կարծիքի ուսումնասիրման նորագույն մեթոդներ՝ ավելի արդյունավետ և նպատակային դարձնելով հաղորդումների հասցեականությունն ու ծրագրման աշխատանքները, պահպանել անհրաժեշտ համամասնություն սոցիալական խմբերի խնդիրների լուսաբանման ոլորտում,
- ապահովել օտարերկրյա ֆիլմերի և հաղորդումների կրկնօրինակման և թարգմանության բարձր որակ,
- ընդլայնել հանրային ալիքների հեռարձակման տարածքը՝ հասանելի լինելով Հայաստանի և Արցախի բոլոր անկյուններում, ինչպես նաև եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Ամերիկայում՝ միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները,
- ժամանակակից տեխնիկական լուծումների շնորհիվ մշտապես նորացնել Հանրային հեռուստաընկերության համացանցային կայքը՝ հնարավորություն ընձեռելով Հայաստանի և սփյուռքի հեռուստադիտողներին ուղիղ եթերում բարձր որակով հետևելու Հանրային հեռուստատեսության միջազգային ալիքով հեռարձակվող հաղորդումներին ու լրատվությանը, ինչպես նաև դիտելու արդեն հեռարձակված հաղորդումներն ու փաստագրական ֆիլմերը,
- վերջին 50 տարիների հայաստանյան կարևոր իրադարձություններին վերաբերող արխիվային նյութերի թվայնացման փուլային աշխատանքների նախագծում, որն իր մեջ կներառի արխիվային նյութերի մշակում, թվայնացման աշխատանքներ, քարտարանի ստեղծում և համացանցային կայքէջի միջոցով նյութերի հասանելիության ապահովում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտները:

Հանրային հեռուստառադիոընկերության միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ,
- 08.03.01.01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում,
- 08.03.01.02. Հեռուստատեսային ծառայություններ,
- 08.03.01.03. Ռադիո ծառայություններ,
- 08.03.01.04. Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ,
- 08.03.01.06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ,
- 08.03.01.10. Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ,
- 08.03.01.11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում
- 08.03.01.12. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում
- 08.03.01.13. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում
- 10.09.02.02. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում,
- 11.01.01.01. ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդ:

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են 2017թ-ին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության միջոցով իրականացված ծրագրերը և դրանց դիմաց ՀՀ պետական բյուջեից «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հատկացված ֆինանսավորման ցուցանիշները:

Աղյուսակ 1

2017 թ. կատարված ծրագրերը և դրանց դիմաց պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազար դրամ)

| **Ծախսային ծրագրի անվանումը** | **Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման** | | | | **Նախահաշիվ 2017 թ.** | **Դրամարկղա-յին ծախս 2017 թ.** | **Դրամարկղա-յին ծախս 2016թ.** |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Բաժին** | **Խումբ** | **Դաս** | **Ծրագիր** | | | |
| Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ | 01 | 01 | 03 | 02 | 36,165.80 | 36,165.80 | 29,971.39 |
| Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում | 08 | 03 | 01 | 01 | 128,675.20 | 123,794.07 | 124,215.87 |
| Հեռուստատեսային ծառայություններ | 08 | 03 | 01 | 02 | 4,762,517.10 | 4,762,517.10 | 4,734,678.10 |
| Ռադիո ծառայություններ | 08 | 03 | 01 | 03 | 785,304.10 | 785,304.10 | 785,304.10 |
| Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ | 08 | 03 | 01 | 04 | 94,646.30 | 94,646.30 | 94,646.30 |
| Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ | 08 | 03 | 01 | 06 | 44,326.20 | 44,326.20 | 44,326.20 |
| Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ | 08 | 03 | 01 | 10 | 150,173.70 | 150,173.70 | 150,173.70 |
| «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում | 08 | 03 | 01 | 11 | 101,919.50 | 101,919.50 | 200,000.00 |
| «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում | 08 | 03 | 01 | 12 | 70,000.00 | 70,000.00 | 70,000.00 |
| «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում | 08 | 03 | 01 | 13 | 199,850.50 | 199,850.50 | 129,860.30 |
| Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | 10 | 09 | 02 | 02 | 1,872.00 | 1,141.70 | 1,086.00 |
| ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 11 | 01 | 01 | 01 | 174,728.70 | 174,728.70 | 132,601.90 |
| **Ընդամենը** | | | | | **6,550,179,10** | **6,544,567.67** | **6,496,863.86** |

**08.03.01.01 «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում»**

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը աշխատակազմի պահպանման նպատակով նախատեսվել է հատկացնել 128,675.20 հազ.դրամ, որից ծախսվել է 123,794.07 հազ.դրամ հետևյալ ուղղություններով՝

Աղյուսակ 2

(հազար դրամ)

| Ծախսային հոդվածի անվանումը | Բյուջե | Դրամարկղային ծախս | Շեղում (+,-) |
|---|---|---|---|
| Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 113,865.40 | 113,835.08 | 30.32 |
| Կապի ծառայություններ | 2,809.50 | 1,332.65 | 1,476.85 |
| Ապահովագրական ծախսեր | 120.00 | 118.00 | 2.00 |
| Գույքի և սարքավորումների վարձակալություն | 3,588.00 | 3,588.00 | - |
| Գործուղումների և շրջագայության ծախսեր | 2,833.20 | 450.41 | 2,382.79 |
| Համակարգչային ծառայություններ | 80.00 | 75.00 | 5.00 |
| Տեղեկատվական ծառայություններ | 800.00 | 640.00 | 160.00 |
| Ներկայացուցչական ծախսեր | 500.00 | 86.15 | 413.85 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 800.00 | 800.00 | - |
| Գրասենյակային նյութեր և հագուստ | 417.10 | 397.50 | 19.60 |
| Տրանսպորտային նյութեր | 2,764.00 | 2,385.86 | 378.14 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 62.00 | 57.37 | 4.63 |
| Պարտադիր վճարներ | 36.00 | 28.05 | 7.95 |
| **Ընդամենը** | **128,675.20** | **123,794.07** | **4,881.13** |

2017թ. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով տնտեսվել է 4,881.13 հազ.դրամ:

2017թ-ի տարեսկզբին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության դեբիտորական պարտքի մնացորդը կազմել է 2,442.75 հազ.դրամ, իսկ տարեվերջին՝ 4,288.82 հազ.դրամ: Դեբիտորական պարտքի տարեվերջի մնացորդը իրենից ներկայացնում է՝

- 3,296.11 հազ.դրամի տարեվերջի դրությամբ եկամտահարկի կանխավճար և արձակուրդային գումարի վճար,
- 186.56 հազ.դրամի պահեստավորված գրասենյակային նյութեր,
- 783.77 հազ.դրամի պահեստավորված տրանսպորտային նյութեր,
- 22.38 հազ.դրամի պահեստավորված կենցաղային նյութեր:

2017թ-ի տարեսկզբին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 405.53 հազ.դրամ, իսկ տարեվերջին՝ 384.30 հազ.դրամ: Կրեդիտորական պարտքի տարեվերջի մնացորդը իրենից ներկայացնում է՝

- 299.00 հազ.դրամի վարձակալված գրասենյակային տարածքների դեկտեմբեր ամսվա վարձավճար,
- 82.14 հազ.դրամի դեկտեմբեր ամսին մատուցված կապի ծառայությունների դիմաց վճար,

- 3.16 հազ.դրամի սոցիալական վճարի գծով կրետիտորական պարտք:

**01.01.03.02 «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ»**

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հանդիսանում է Հեռարձակողների եվրոպական միության լիիրավ անդամ, որի համար վճարվում է անդամակցության տարեկան վճար: Անդամակցության վճարի գումարը ֆիքսված չէ, այն վերահաշվարկվում է հաշվի առնելով Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և 2017թ-ի համար կազմել է 38,642.56 հազ.դրամ (80,153.0 շվեյցարական ֆրանկին համարժեք): «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ» ծրագրով Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 36,165.80 հազ.դրամ (75,015.65 շվեյցարական ֆրանկին համարժեք), որը ամբողջությամբ վճարվել է 2017թ-ի ընթացքում և տարեվերջի դրությամբ առաջացել է 2,476.76 հազ.դրամի կրեդիտորական պարտք (5,137.35 շվեյցարական ֆրանկին համարժեք): Կրեդիտորական պարտքը մարելու համար «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով 2018թ-ին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը հատկացվել է համապատասխան գումար:

Աղյուսակ 3

**2016-2017թթ. դրամարկղային ծախսի համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016 թ. | 2017 թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 01.01.03.02 | «Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ» | 29,971.39 | 36,165.80 | 6,194.41 |

2017թ-ին անդամակցության գումարի փաստացի վճարումը 2016թ-ի համեմատ աճել է 6,194.41 հազ.դրամով, ինչը պայմանավորված է անդամակցության վճարի գումարի ավելացման հանգամանքով:

**08.03.01.02. «Հեռուստատեսային ծառայություններ»**

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերկեություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 4,734,678.10 հազ.դրամ: ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1649-Ն որոշմամբ իրականացվել է վերաբաշխում և 08.03.01.11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրից 27,839.00 հազ.դրամը նույնպես ուղղվել է 08.03.01.02. «Հեռուստատեսային

ծառայություններ» ծրագրին: Այսպիսով, ընդհանուր առմամբ 2017թ-ին ՀՀ պետական բյուջեից «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրին ուղղվել է 4,762,517.10 հազ.դրամ:

Աղյուսակ 4

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.02 | «Հեռուստատեսային ծառայություններ» | 4,734,678.10 | 4,762,517.10 | 27,839.00 |

2017թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները 2016թ. համեմատ աճել են 27,839.00 հազ.դրամով, ինչը պայմանավորված է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ այս ծրագրին ուղղված հավելյալ ֆինանսավորմամբ: 2017թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հետ:

**08.03.01.03 «Ռադիո ծառայություններ»**

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ–ին «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 785,304.10 հազ.դրամ:

Աղյուսակ 5

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.03 | «Ռադիո ծառայություններ» | 785,304.10 | 785,304.10 | - |

2017թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները 2016թ. համեմատ չեն փոխվել: 2017թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հետ:

**08.03.01.04 «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ»**

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունն իրականացնում է «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 94,646.30 հազ.դրամ:

Աղյուսակ 6

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.04 | «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» | 94,646.30 | 94,646.30 | - |

2017թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները 2016թ. համեմատ չեն փոխվել: 2017թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հետ:

**08.03.01.06 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ»**

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով: «ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 44,326.20 հազ.դրամ:

Աղյուսակ 7

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.06 | «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» | 44,326.20 | 44,326.20 | - |

2017թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները 2016թ. համեմատ չեն փոխվել: 2017թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հետ:

**08.03.01.10 «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ»**

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 150,173.70 հազ.դրամ:

Աղյուսակ 8

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.10 | «Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ» | 150,173.70 | 150,173.70 | - |

2017թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները 2016թ. համեմատ չեն փոխվել: 2017թ-ի դրամարկղային ծախսը համընկել է բյուջեով նախատեսված ֆինանսավորման հետ:

**08.03.01.11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում**

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրով «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 129,758.50 հազ.դրամ: ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1649-Ն որոշմամբ իրականացվել է վերաբաշխում և 08.03.01.11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրից 27,839.00 հազ.դրամն ուղղվել 08.03.01.02. «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրին: Այսպիսով, ընդհանուր առմամբ 2017թ-ին ՀՀ պետական բյուջեից «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում ծրագրին ուղղվել է 101,919.50 հազ.դրամ:

Աղյուսակ 9

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.11 | «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում | 200,000.00 | 101,919.50 | -98,080.50 |

2017թ-ին, ինչպես և 2016թ-ին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները ուղղվել են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տարբեր մասնաշենքերի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերմանը:

**08.03.01.12. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում**

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում» ծրագրով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 70,000.00 հազ.դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է 2017թ-ի ընթացքում:

Աղյուսակ 10

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.12 | «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում | 70,000.00 | 70,000.00 | - |

2017թ-ին, ինչպես և 2016թ-ին ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները ուղղվել են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին պատկանող շենքի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերմանը:

**08.03.01.13. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում**

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում» ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 199,850.5 հազ.դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է 2017թ-ի ընթացքում:

Աղյուսակ 11

**2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Աճ/նվազում(+/-) |
|---|---|---|---|---|
| 08.03.01.13 | «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում | 129,860.30 | 199,850.50 | 69,990.20 |

2017թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները 2016թ. համեմատ ավելացել են 69,990.20 հազ.դրամով և տեխնիկական վերազինման գործընթացի շրջանակներում ուղղվել են տեխնիկական միջոցների ձեռքբերմանը:

**10.09.02.02 «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում»**

Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացվել է 1,872.00 հազ.դրամ: Փաստացի ծախսը 2017թ-ի համար կազմել է 1,141.70 հազ.դրամ:

Աղյուսակ 12

**2016-2017թթ. դրամարկղային ծախսերի համեմատական**

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Շեղում(+, -) |
|---|---|---|---|---|
| 10.09.02.02 | «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» | 1,086.00 | 1,141.70 | 55.70 |

**11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ»**

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 1544-Ն որոշման, Հայաստանի հանրային հեռուստաընկերության կողմից իրականացված տեխնիկական վերազինման գործընթացի արդյունքում առաջացած պարտավորությունների կատարման նպատակով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությանը որպես նվիրաբերություն տրամադրելու համար Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությանը հատկացվել է 174,728.70 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության

կառավարության պահուստային ֆոնդից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Աղյուսակ 13

2016-2017թթ. ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների համեմատական

(հազար դրամ)

| Ծրագիր | Ծրագրի անվանումը | 2016թ. | 2017թ. | Շեղում(+, -) |
|---|---|---|---|---|
| 11.01.01.01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 132,601.90 | 174,728.70 | 42,126.80 |

2017թ-ին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացումները 2016թ-ի համեմատ աճել են 42,126.80 հազ.դրամով:

Հավելված 1
Աղյուսակ 16

**Հաշվետվություն**

**«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի վերաբերյալ, որոնց հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել են դրամաշնորհի տեսքով առանց մրցույթի**

Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ կառավարման մարմնի անվանումը — Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ

հազ. դրամ

| Բյուջետային | | | Ծախսային ծրագրի անվանումը | Տարեսկզբին հաստատված տարեկան դրամաշնորհի գումարը | Տարեկան ճշտված գումար | Դրամարկղային ծախս | Դրամաշնորհի ստացող տնտեսվարող սուբյեկտի անվանումը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բաժին | Խումբ | Դաս | | | | | |
| 08 | 03 | 01 | 02. Հեռուստատեսային ծառայություններ | 4,734,678.10 | 4,762,517.10 | 4,762,517.10 | «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 03. Ռադիո ծառայություններ | 785,304.10 | 785,304.10 | 785,304.10 | «Հայաստանի Հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 04. Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ | 94,646.30 | 94,646.30 | 94,646.30 | «Շիրակի Հանրային հեռուստառադիո» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ | 44,326.20 | 44,326.20 | 44,326.20 | «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 10. Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ | 150,173.70 | 150,173.70 | 150,173.70 | «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 11. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի շենք-շինությունների հիմնանորոգում | 129,758.50 | 101,919.50 | 101,919.50 | «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 12. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում | 70,000.00 | 70,000.00 | 70,000.00 | «Հայաստանի Հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ |
| 08 | 03 | 01 | 13. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինում | 199,850.50 | 199,850.50 | 199,850.50 | «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ |

<u>Օրինակելի ձև</u><br><u>Հ-2</u>

<u>ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2017թ. - 31.12.2017թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը` **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**

2. Փոստային հասցեն` **ք. Երևան, Ա.Մանուկյան 5**

3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման [ ]

4.Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը ________________________________

5. Հիմնարկը սպասարկող` ՏԳԲ-ի անվանումը **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

6. Հիմնարկի` գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը 900011430163

7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը` (ՀՀ պետական բյուջե` 1, համայնքի բյուջե` 2) 1

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Բաժին N 08

Խումբ N 03

Դաս N 01

9. Ծրագրի անվանումը` **Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում**

10. Ծրագրի կոդը 01

11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 10 50 33

12. Չափի միավորը` *հազար դրամ*

| Տողի N | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր) | | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որոնցից`30 օրից անց պարտքեր | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| **1100000** | **Ընթացիկ ծախսեր** | **x** | **128,675.20** | **-** | **-** | **-** | **128,675.20** | **123,931.95** | **123,794.09** | **121,926.80** | | **-** | **137.86** |
| | այդ թվում` | | | | | | | | | | | | |
| **1100000** | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ` ԸՆԴԱՄԵՆԸ,** | **x** | **128,675.20** | **-** | **-** | **-** | **128,675.20** | **123,931.95** | **123,794.09** | **121,926.80** | | **-** | **137.86** |
| 1110000 | **1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ` ԸՆԴԱՄԵՆԸ,** այդ թվում` | x | 113,865.40 | - | - | - | 113,865.40 | 113,865.40 | 113,835.08 | 112,127.25 | | - | 30.32 |
| 1110000 | **1.1 Աշխատանքի վարձատրություն** | x | 113,865.40 | - | - | - | 113,865.40 | 113,865.40 | 113,835.08 | 112,127.25 | | - | 30.32 |
| 1111000 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | **4111** | 113,865.40 | | - | - | 113,865.40 | 113,865.40 | 113,835.08 | 112,127.25 | | | 30.32 |
| 1117000 | -Սոցիալական ապահովության վճարներ | **4131** | - | | | - | - | - | - | | | | |
| 1120000 | **2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում** | x | 14,711.80 | - | - | - | 14,773.80 | 10,030.55 | 9,930.96 | 9,771.50 | | - | 99.59 |
| 1121000 | ***2.1 Շարունակական ծախսեր*** | x | 6,517.50 | - | - | - | 6,517.50 | 5,038.66 | 5,038.66 | 5,025.20 | | - | - |
| 1121400 | -Կապի ծառայություններ | **4214** | 2,809.50 | | | - | 2,809.50 | 1,332.66 | 1,332.66 | 1,319.20 | | | |
| 1121500 | -Ապահովագրական ծախսեր | **4215** | 120.00 | | - | - | 120.00 | 118.00 | 118.00 | 118.00 | | | |
| 1121600 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | **4216** | 3,588.00 | | | - | 3,588.00 | 3,588.00 | 3,588.00 | 3,588.00 | | | |
| 1122000 | ***2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր*** | x | 2,833.20 | - | | | 2,833.20 | 550.00 | 450.41 | 450.41 | | - | 99.59 |
| 1122100 | -Ներքին գործուղումներ | **4221** | | | | | - | 50.00 | 42.00 | 42.00 | | | 8.00 |

| Տողի N | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր) | | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | Որոնցից 30 օրից անց պարտքեր | |
| 1122200 | -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | **4222** | | | | | - | 500 | 408.41 | 408.41 | | | 91.59 |
| 1123000 | ***2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում*** | x | 1,380.00 | - | - | - | 1,380.00 | 801.15 | 801.15 | 801.15 | | - | - |
| 1123200 | -Համակարգչային ծառայություններ | **4232** | 80.00 | | | | 80.00 | 75.00 | 75.00 | 75.00 | | | |
| 1123400 | -Տեղեկատվական ծառայություններ | **4234** | 800.00 | | | | 800.00 | 640.00 | 640.00 | 640.00 | | | |
| 1123700 | -Ներկայացուցչական ծախսեր | **4237** | 500.00 | | | - | 500.00 | 86.15 | 86.15 | 86.15 | | | |
| 1125000 | ***2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)*** | x | 800.00 | - | - | - | 800.00 | 800.00 | 800.00 | 800.00 | | - | - |
| 1125200 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | **4252** | 800.00 | | | - | 800.00 | 800.00 | 800.00 | 800.00 | | | |
| 1126000 | ***2.6 Նյութեր*** | x | 3,243.10 | - | - | - | 3,243.10 | 2,840.74 | 2,840.74 | 2,694.74 | | - | - |
| 1126100 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | **4261** | 417.10 | | - | | 417.10 | 397.50 | 397.50 | 430.50 | | | |
| 1126400 | -Տրանսպորտային նյութեր | **4264** | 2,764.00 | | - | - | 2,764.00 | 2,385.86 | 2,385.86 | 2,168.19 | | | |
| 1126700 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | **4267** | 62.00 | | | | 62.00 | 57.38 | 57.38 | 96.05 | | | |
| 1170000 | ***7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | 36.00 | - | - | - | 36.00 | 36.00 | 28.05 | 28.05 | | - | 7.95 |
| 1172000 | *7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ* | x | 36.00 | - | | | 36.00 | 36.00 | 28.05 | 28.05 | | | |
| 1172300 | **-**Պարտադիր վճարներ | **4823** | | | | - | - | 36.00 | 28.05 | 28.05 | | | 7.95 |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | x | 128,675.20 | - | - | - | 128,675.20 | 123,931.95 | 123,794.09 | 121,926.80 | | - | 137.86 |

Օրինակելի ձև Յ-4

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԻՄՆԱՐԿԻ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ, ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2017թ. - 31.12.2017թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը` **Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ**

2. Փոստային հասցեն` **ք. Երևան, Ա.Մանուկյան 5**

3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման [ ]

4.Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը ______________________

5. Հիմնարկը սպասարկող` ՏԳԲ-ի անվանումը **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

6. Հիմնարկի` գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը: 900011430163

7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը` (ՀՀ պետական բյուջե` 1, համայնքի բյուջե` 2): 1

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման

Բաժին N: 08

Խումբ N: 03

Դաս N: 01

9. Ծրագրի անվանումը` Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

10. Ծրագրի կոդը: 01

11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման: 10 50 33

12. Չափի միավորը` հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Դեբիտորական պարտքեր | | | | Կրեդիտորական պարտքեր | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումները | NN | տարեսկիզբ | | տարեվերջ | | տարեսկիզբ | | տարեվերջ | |
| | | | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից | ընդամենը | ն/թ բյուջեից |
| Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
